ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱԺԲԳ

ԵՐԵՎԱՆ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1		**ՆԱԽԱԲԱՆ**	3
2		**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**	3
	2. 1	Ինքնաշխատ գործառույթների իրականացում	3
	2. 2	Հարցումների հիման վրա տեղեկանքների և աջակցության տրամադրում	3
	2. 3	Ազգային ժողովի կարողությունների զարգացում	8
	2. 4	Այլ աշխատանքներ	9

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի բյուջետային գրասենյակը (այսուհետ՝ Բյուջետային գրասենյակ) հաշվետու ժամանակահատվածում (03. 01. 2022թ.-30. 12. 2022թ.) գործել է հետևյալ կազմով՝ Գագիկ Բարսեղյան՝ համակարգող փորձագետ և Աշոտ Եղիազարյան՝ փորձագետ:

Բյուջետային գրասենյակի կողմից 2022 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը կազմվել է Ազգային ժողովի աշխատակարգի 120-րդ կետի պահանջներից ելնելով:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ինքնաշխատ գործառույթների իրականացում (Գործառույթներ որոնք իրականացվում են իմպերատիվ՝ իրավական ակտերով սահմանված դեպքերում և ժամկետներում, անկախ հարցման առկայության)

Բյուջետային գրասենյակը, հաշվետու ժամանակահատվածում, ղեկավարվելով Ազգային ժողովի աշխատակարգի 115-րդ կետի 10-րդ ենթակետով, սահմանված ժամկետներում, պատրաստել և Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին է տրամադրել՝

- Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության ամփոփ նկարագիրը,
- Հայաստանի Հանրապետության 2022 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքի ամփոփ նկարագիրը,
- Հայաստանի Հանրապետության 2022 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքի ամփոփ նկարագիրը,
- Հայաստանի Հանրապետության 2022 թվականի ինն ամիսների պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքի ամփոփ նկարագիրը,
- Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի նախագծի ամփոփ նկարագիրը:

Հարցումների հիման վրա տեղեկանքների և աջակցության տրամադրում

Բյուջետային գրասենյակը 2022 թվականի ընթացքում ստացել է 71 հարցում, որից 39-ը պատգամավորական, 5-ը խմբակցություններից և 32-ը մշտական հանձնաժողովներից: Ստացված հարցումների հիման վրա պատրաստվել և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին ու նրա տեղակալներին, մշտական հանձնաժողովներին ու

խմբակցություններին, ինչպես նաև պատգամավորների է տրամադրվել 555 տեսակի տեղեկանքներ:

Բյուջետային գրասենյակը ղեկավարվելով Ազգային ժողովի աշխատակարգի՝

1. 115-րդ կետի 5-րդ ենթակետով և 117-րդ կետի 3-րդ ենթակետով, պատրաստել է ոլորտային տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսերի կատարման ընթացքի վերաբերյալ: Պատրաստված 186 տեսակի տեղեկանքները տրամադրվել են Ազգային ժողովի համապատասխան մշտական հանձնաժողովներին՝ ըստ իրենց գործունեության ոլորտների, ինչպես նաև Ազգային ժողովի նախագահին, Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, բոլոր խմբակցություններին և պատգամավորների: Մասնավորապես,

- առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովին՝ առողջապահության ոլորտի ծախսեր,
- աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովին՝ սոցիալական ապահովության ոլորտի ծախսեր,
- արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովին՝ արտաքին հարաբերությունների ոլորտի ծախսեր,
- գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովին՝ կրթության, հանգստի, մշակույթի և կրոնի, «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» բաժնի «Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք» և «Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ» խմբերի համար նախատեսված ծախսեր,
- տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովին՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, մարզպետարանների, կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտների, «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ», գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և որսորդության, ջրամատակարարման և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտների ծախսեր,
- պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովին՝ պաշտպանության, հասարակական կարգի և անվտանգության ու փրկարար ծառայության ոլորտների ծախսեր,
- պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին՝ դատական գործունեության և իրավական պաշտպանության, դատախազության, կալանավայրերի ու նախաքննության բնագավառներում ծախսեր,
- մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովին՝ իրավական պաշտպանության և մարդու իրավունքների պաշտպանության բնագավառների ծախսեր,

- ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին՝ պետական բյուջեի ծախսեր, ներառյալ պետական պարտքի գծով գործառնություններին ուղղված ծախսեր,
- տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովին՝ «Տնտեսական հարաբերություններ» և «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ» բաժինների ծախսեր,
- պետական բյուջեի ծախսերն ամբողջությամբ, ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

Տեղեկատվության աղբյուրներն են հանդիսացել «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2021թ դեկտեմբերի 23-ի թիվ 2121-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության «LS Rep» ծրագրային համակարգը;

2. 115-րդ կետի 5-րդ ենթակետով և 117-րդ կետի 3-րդ ենթակետով պատրաստել է 22 տեսակի համեմատական-վերլուծական տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեներով նախատեսված հարկային եկամուտների և պետական տուրքերի հավաքագրման ընթացքի վերաբերյալ: Դրանք տրամադրվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին, Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, բոլոր մշտական հանձնաժողովներին ու խմբակցություններին և պատգամավորների:

Տեղեկատվության աղբյուրներ են հանդիսացել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ինտերնետային կայքում հրապարակված տեղեկատվությունները և «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2021թ դեկտեմբերի 23-ի թիվ 2121-Ն որոշումը;

3. 115-րդ կետի 7-րդ ենթակետով և 117-րդ կետի 4-րդ ենթակետով, պատրաստել է համեմատական-վերլուծական տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության 2020-2022 թթ. սոցիալ-տնտեսական իրավիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների վերաբերյալ: Պատրաստված 24 տեսակի տեղեկանքները տրամադրվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին, Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, բոլոր մշտական հանձնաժողովներին ու խմբակցություններին, ինչպես նաև պատգամավորների:

Տեղեկատվության աղբյուրներ են հանդիսացել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները՝ 2020-2022թթ. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ;

4. 115-րդ կետի 7-րդ ենթակետով և 117-րդ կետի 4-րդ ենթակետով, պատրաստել է 132 տեսակի համեմատական-վերլուծական տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական պարտքերի վերաբերյալ, որոնք տրամադրվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին, Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, բոլոր մշտական հանձնաժողովներին ու խմբակցություններին, ինչպես նաև պատգամավորների:

   Տեղեկատվության աղբյուրներ են հանդիսացել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում հրապարակված Հայաստանի Հանրապետության պետական պարտքի ամսեկան տեղեկագրերը;
5. 115-րդ կետի 7-րդ ենթակետով և 117-րդ կետի 4-րդ ենթակետով, պատրաստել է 9 տեսակի համեմատական վերլուծական տեղեկանքներ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ,
6. 115-րդ կետի 4-րդ ենթակետով և 117-րդ կետի 3-րդ ենթակետով, օգտագործելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության «ԳԳՕ» համակարգի (LS Finance) հնարավորությունները պատրաստվել են 108 տեսակի համեմատական տեղեկանքներ (օպերատիվ տեղեկատվություն) Հայաստանի Հանրապետության 2018-2022թթ. պետական բյուջեներով նախատեսված հարկային եկամուտների և պետական տուրքերի վերաբերյալ (հաշվետվության ձև 8210), որոնք տրամադրվել են Ազգային ժողովի նախագահին, Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, բոլոր խմբակցություններին, Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների և պատգամավորների;
7. ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախնական տարբերակի քննարկման համատեքստում պետրաստվել և շահառու մշտական հանձնաժողովներին ու պատգամավորներին են տրամադրվել ՀՀ պաշտպանության, արտակարգ իրավիճակների և արտաքին հարաբերությունների նախարարությունների, ինչպես նաև ՀՀ ոստիկանության ու ազգային անվտանգության ծառայության բյուջետային ծրագրերի և դրանց արդյունքային ցուցանիշների վերաբերյալ (5 տեսակ),
8. ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախնական տարբերակի քննարկման համատեքստում ՀՀ Ազգային ժողովի ոլորտային մշտական հանձնաժողովներին, շահառու պատգամավորներին ու ՀՀ ֆինանսների նախարարությանն են ներկայացվել 41 դիտարկումներ և առաջարկություններ Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի 19 բյուջետային ծրագրերի վերաբերյալ:
9. 115-րդ և 117-րդ կետերի 1-ին ենթակետերով, պատրաստել է համեմատական տեղեկանքներ (8 տեսակի տեղեկանքներ) Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության հիմնական ցուցանիշների վերաբերյալ, ներառյալ 2018-2020թթ. , ինչպես նաև ինֆոգրաֆիկ, համեմատական

վերլուծություններով տեղեկանքներ (2 տեսակի տեղեկանքներ) Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության հիմնական ցուցանիշների, պաշտպանության, հասարակական կարգի և անվտանգության վերաբերյալ, ներառյալ 2018-2020թթ. ,

10. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության համատեքստում պատրաստվել են տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության 2018-2021թթ. պետական բյուջեներով 28 բյուջետային գլխավոր կարգադրիչների համար սահմանված ֆինանսական, ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ, որոնք տրամադրվել են Ազգային ժողովի պատգամավորների և ոլորտային մշտական հանձնաժողովներին, ըստ գործունեության ոլորտների,
11. ՀՀ Ազգային ժողովի ոլորտային մշտական հանձնաժողովներին ու շահառու պատգամավորներին ներկայացրել է 61 դիտարկումներ և հարցադրումներ Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությամբ 12 բյուջետային գլխավոր կարգադրիչների բյուջետային ծրագրերի վերաբերյալ:
12. Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի նախագծի վերաբերյալ պատրաստվել են 30 տեղեկանքներ, որոնք վերաբերում էին բյուջետային գլխավոր կարգադրիչների բյուջետային ծրագրերին, դրանց համար սահմանված ֆինանսական, ոչ ֆինանսական, այդ թվում՝ վերջնական արդյունքի, ցուցանիշներին /ներառվել են 2019-2022թթ. ցուցանիշները/: Դրանք տրամադրվել են Ազգային ժողովի ոլորտային մշտական հանձնաժողովներին, ըստ գործունեության ոլորտների և Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին,
13. պատրաստել է համեմատական տեղեկանքներ (10 տեսակի տեղեկանքներ, այդ թվում՝ ինֆոգրաֆիկ) Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի նախագծի հիմնական ցուցանիշների վերաբերյալ, ներառյալ 2018-2022թթ. ,
14. Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի նախագծի քննարկման համատեքստում Ազգային ժողովի շահառու պատգամավորներին ու մշտական հանձնաժողովներն ներկայացվել են 55 հարցադրումներ, դիտարկումներ և առաջարկություններ՝ շուրջ 2 տասնյակ բյուջետային ծրագրերի վերաբերյալ:

Ազգային ժողովի կարողությունների զարգացում

2022 թվականի ընթացքում Բյուջետային գրասենյակն Ազգային ժողովի աշխատակարգի 117-րդ կետի համաձայն, Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի հանձնաժողովի հարցման հիման վրա, Միավորված ազգերի զարգացման ծրագրերի կազմակերպության «Ժամանակակից խորհրդարան՝

ժամանակակից Հայաստանի համար» ծրագրի աջակցությամբ ու համագործակցությամբ 2022 թվականի՝

- ապրիլի 29-ից մայիսի 1-ը Աղվերանի «Ապրիկոտ» հյուրանոցում Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների և խմբակցությունների փորձագետների, Ազգային ժողովի աշխատակազմի աշխատակիցների և պատգամավորների օգնականների համար կազմակերպել է աշխատաժողով «Հայաստանի Հանրապետության բյուջետային գործընթացը. ծրագրային և գենդերազգայուն բյուջետավորում» թեմայով:

  Աշխատաժողովի ընթացքում Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետ Գագիկ Բարսեղյանը ներկայացրել է ՀՀ բյուջետային գործընթացը, մանրամասնելով այդ գործընթացում Աժ դերը, ծրագրային և գենդերազգայուն բյուջետավորման էությունն ու դրանց կիրառության առանձնահատկությունները ՀՀ-ում և Բյուջետային գրասենյակի գործունեությունը, տրամադրած ծառայությունները և դրանցից օգտվելու հնարավորությունները:

  Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի փորձագետ Աշոտ Եղիազարյանը ներկայացրել է ռազմավարական պլանավորման էությունը և դրա կապը բյուջետային գործընթացի հետ, ռազմավարական փաստաթղթերի հիերարխիան և ռազմավարություններին ներկայացվող պահանջները ծրագրային բյուջետավորման համատեքստում, ինչպես նաև անկախ ֆինանսական ինստիտուտների դերը աշխարհում:

  Աշխատաժողովին մասնակցել է 29 մասնակից, որից 10-ը խմբակցությունների փորձագետներ և պատգամավորների օգնականներ, 5-ը՝ Աժ աշխատակազմի աշխատակիցներ և 14-ը՝ մշտական հանձնաժողովների փորձագետներ:

- հոկտեմբերի 14-ից 16-ը Ծաղկաձորի Մարիոտ հյուրանոցում Ազգային ժողովի պատգամավորների, խմբակցությունների փորձագետների, Ազգային ժողովի աշխատակազմի աշխատակիցների և պատգամավորների օգնականների համար կազմակերպել է աշխատաժողով «ՀՀ բյուջետային գործընթացը. ծրագրային, գենդերազգայուն և ԿԶՆ-ի բյուջետավորում» թեմայով: Աշխատաժողովի ընթացքում Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետ Գագիկ Բարսեղյանը ներկայացրել է ՀՀ բյուջետային գործընթացը, մանրամասնելով այդ գործընթացում Աժ դերը, ծրագրային բյուջետավորման էությունն ու դրա կիրառության առանձնահատկությունները ՀՀ-ում, ինչպես նաև 2023 թվականի պետական բյուջեի նախագծի հիմնական ցուցանիշները:

  Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի փորձագետ Աշոտ Եղիազարյանը ներկայացրել է ռազմավարական պլանավորման էությունը և դրա կապը բյուջետային գործընթացի հետ, ռազմավարական փաստաթղթերի հիերարխիան և ռազմավարություններին ներկայացվող պահանջները ծրագրային բյուջետավորման համատեքստում, ինչպես նաև անկախ ֆինանսական ինստիտուտների դերը աշխարհում:

  Աշխատաժողովին մասնակցել է 30 մասնակից, այդ թվում՝ պատգամավորներ:

Այլ աշխատանքներ

2022 թվականի ընթացքում Բյուջետային գրասենյակի կարողությունների զարգացման շրջանակներում ՄԱԿ-ի զարգացման գրասենյակի «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի հետ համագործակցությամբ ու աջակցությամբ 2022 թվակաի մայիսի 8-ից 13-ը Բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետ Գագիկ Բարսեղյանն ու փորձագետ Աշոտ Եղիազարյանն այցելել են Ավստրիայի Հանրապետություն: Այցի շրջանակներում տեղի են ունեցել այցելություններ Ավստրիայի խորհրդարանի բյուջետային ոլորտի հանձնաժողով և բյուջետային գրասենյակ, ֆիսկալ խորհուրդ, բյուջետային ծրագրերի գնահատման գրասենյակ և բարձրագույն աուդիտորական մարմին: Ուսումնասիրվել են բյուջետային գրասենյակի կողմից կատարվող վերլուծությունները, դրանց մեթոդաբանությունը և մատուցած ծառայությունները, ֆիսկալ խորհրդի վերահսկողական գործառույթը՝ կառավարության կողմից հարկաբյուջետային կանոնների պահպանման մասով, բյուջետային ծրագրերի գնահատման գրասենյակի կողմից բյուջետային ծրագրերի գնահատման մեթոդաբանությունն ու վերլուծությունները, բյուջետային հանձնաժողովի գործունեությունը բյուջետային վերահսկողության և բարձրագույն աուդիտորական մարմնի հետ համագործակցության ոլորտներում և այլն:

Բյուջետային գրասենյակի աշխատակազմը ներգրավված է պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարության իրագործման և մոնիթորինգի գործընթացում: Սրա շրջանակներում Բյուջետային գրասենյակը ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել տեղեկատվություն 2021 թվականի և 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՊՖԿՀ 2019-2023 թվականներին իրականացվելիք գործողությունների ծրագրի «51. Արտաքին վերահսկողության ապահովում (Տարեկան բյուջեի և ՀՊ-ի հաշվետվություններ)» և «52. Բյուջետային գրասենյակի և ԱԺ պատգամավորների ու հանձնաժողովների փորձագետների կարողությունների զարգացում» միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ:

Այլ երկրների բյուջետային գրասենյակների հետ համագործակցության շրջանակներում՝ «Միջազգային Հանրապետական Ինստիտուտի» աջակցությամբ Բյուջետային գրասենյակը սկսել է համագործակցել ԱՄՆ Կոնգրեսի բյուջետային գրասենյակի հետ: Սույն թվականի մարտի 15-ին և մարտի 30-ին ԱԺ և ԱՄՆ Կոնգրեսի բյուջետային գրասենյակների միջև տեղի են ունեցել հեռավար քննարկումներ: Քննարկումների ընթացքում ներկայացվել են երկու գրասենյակների գործունեության շրջանակները, ինչպես նաև առավել մանրամասն ծանոթացել ենք ԱՄՆ Կոնգրեսի բյուջետային գրասենյակի կողմից մատուցված ծառայություններին:

Հեռավար քննարկումներ են եղել նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) անկախ ֆինանսական ինստիտուտների ցանցի պատասխանատուների հետ՝ նրանց հետ համագործակցելու հեռանկարների վերաբերյալ: Սրա

շրջանակներում պայմանավորվածություն կա հեռավար քննարկում կազմակերպել Իռլանդիայի խորհրդարանական բյուջետային գրասենյակի հետ: